

401 Shawmut Avenue
Boston, Mass.

No. 666

156 5th Ave., New York, N. Y
Rooms 913-914

Telephone: ^{Chelsea 1791} Copley 7234-M

28 մարտի, 1928

Մեծարելի եւ Պատուական Անդամոց
Հոգաբարձութեան Տրոյի
Տեարց

Մինաս Հայրապետեանի
Թորոս Տէր-Պետրոսեանի
Յակոբ Աղազարմի
Գասպար Տէր-Մեսրոպեանի
Գաբրիէլ Պալոյեանի
Քերովբէ Քերովբեանի
Միհրան Սահաբեանի
Գարեգին Տուապեանի

Յարգելի եւ Տեարց

եւ Շինութեան Յանձնախումբի
Տեարց

Յակոբ Աղազարմի
Գաբրիէլ Գազանեանի
Խորեն Թորիկեանի
Թորոս Տէր-Պետրոսեանի
Եղիա Հարսոյեանի
Արսէն Տէր-Յովհաննէսեանի
Կարապետ Տէր-Պետրոսեանի
Մինաս Մելքոնեանի

Երէկուայ, մարտ 25-ի, մեծհանդիսաւորութեան, Ձեր այնքան գեղեցիկ
ջանքերով ձեռք բերուած նոր եկեղեցու Օծման Օրը, հաւաստի ենք որ իբրեւ տարի-
ներու երկար ու անընդմիջ յիշատակ պիտի մնայ ձեր սրտերու մէջ, այն ներքին նոր
եւ գիտակցական ըմբռնումով թէ՛ համերաշխ գործի եւ սիրալիր ծառայութեան ոգին
, որ տեսած ենք ցայժմ ձեր մէջ, այդ ամբողջ գործի հիմէն ~~հարգելի եւ Տեարց~~ :

Հասարակական գործերի համար իրենց ծառայութիւնը, անձնական աջակցու-
թիւնը, հոգն ու խնամոտ գուրդուրանքը բերող անձերը գնահատելու պարտքը եւ ա-
նոնց անձնական օրինակը համայնական սեփականութիւն դարձնելու զաղակարը մեզ
վրայ, իբր Առաջնորդի, բարոյական պարտիք կը դնեն գնահատութեան այն խօսքն ասել
ինչ որ գրութեանս միջոցով կարտայայտենք:

Գոհ ենք Ձեզմէ, ամէնքէդ, որ կարճ ժամանակի մէջ կարող եղաք արդիւ-
նաւոր դարձնել այն ծանր գործը, որ դրուած էր ձեր առաջ: Այդ գործի մէջ գի-
տենք որ շատ շատերիդ անձնական դրամական գոհաբերութիւնը եւս մեծ դեր ունեցած
է հասարակութեան սրտերը կապելու գործի հետ: Գիտենք թէ դուք որքան ժամանակի
գոհաբերութիւն եւս բերած էք խնդիրները լուծելու, կարգաւորելու եւ դժուարու-
թիւնները յարդարելու համար:

Եւ այս ամէնքը կը դրդեն զմեզ ձեր օժանդակութեան, ծառայութեան եւ
գործն ստեղծելու եւ գլուխ հանելու գնահատութիւնն ընդգծելով, օրհնել զձեզ
ամէնքդ, մեր սիրելիներն ու զաւակները; որ այսուհետեւ եւս միշտ պատրաստ ըլ-
լաք ձեր ծառայութիւնը բերելու յօգուտ այն մեծ Հաստատութեան, որ հիմքն է Ձեր
եւ հանրական բոլոր ասլուումներու ազգային կեանքի, բարոյական կենցաղի եւ գիտա-
կից քաղաքացիների:

Թող Տէրը զօրացնէ զմեզ ամէնքդ, պահէ զմզ անկործ, որպէսզի երբ ալ
զմեզ Համայնքը նոր գործի հրաւիրէ, գաք սիրով աւարտելու սկսածը եւ նոր եկե-
ղեցին եւս ազտ լինի եւ պարտքերէ նիւթական եւ ծանրութենէ ու դժուարին կացու-
թենէ:

Հայրական օրհնութեամբ եւ սիրով
առ ամէնքդ
